

ցին բնաջնջել մահմետականները: Այս նպատակով 20 խոհեմ անձեր ընտրեցին Հռոմ զրկելու համար, որպէսզի Պապը միջամտէ Փորթուգալի թագաւորին մօտ, օգնելու համար իրենց՝ վերահաստատել իրենց թագաւորութիւնը, քանի որ անիկա Մոզամպիկի կողմէն սահմանակից էր իրենց:

1549ին այս 20 անձերը գացին Հռոմ և ներկայացան Գրիգոր ԺԳ. Պապին (1572-1586)(1) և անոր տունին իրենց ենթարկուած աղէտներու մասին հետեւեալ յուշագիրը.

«Մեք ուղղափառ Հապեթի Բիսոսնեայս ուր ի յԱրիկա, ունեալ զբազում մահմետական ստրուկօ ախիմնն ռայեք, սոքա ապստամբեալ սպանին զբազումս ի մեզ եւ տրեցին զթագաւորանիս քաղաքն մեր զԿոնստանտնուպոլս, եւ իսնդրեմք ի Սրբուքենեդ զի միջնորդեսցես Բորթիկիզու թագաւորին, զի ցա սահմանակից մեր է եւ կարե զօգուտքիւնս անել մեզ»:

Պապը յանձնարարականով մը զանոնք զրկեց Յովհաննէս Գ. Փորթուգալի թագաւորին (1521-1557), որ հինգ նաւ զօրք ու ռազմամթերք զրկեց Մոզամպիկի կառավարիչին, հրամայելով որ անպատճառ երթայ Հապէչիստան, վերագրուէ Կէօնէր քաղաքը մահմետական ապստամբներու ձեռքէն և վերադարձնէ Հապէչներուն:

(1) Ինչպէս կը տեսնուի՝ ժամանակագրական անհարթութիւն կայ այս պատմութեան մէջ, զոր կ'աւանդէ Հ. Յովհաննէս Թումանյանը: Իր աշխարհակառնութեան, 1764—1765ին, Թումանյան վրդ. Հապէթիսան գոցած էր եւ իբր արհուի գանձապահ յաջորդած արաբկիրցի Սէլէմ Ուսային, իսկ իրեն յաջորդը եղած էր իբր գուալը՝ Պօղոս Թումանյան (տես «Բազմավէպ», 1937, էջ 142—135): 1549ին Գրիգոր ԺԳ. Պապը պատճառով վրայ չէր: Կա՛մ թուականը կա՛մ Պապին անունը սխալ է: Հաւանօրէն Պապին անունն է սխալը: